

ԳԵՆԵՐԱԿՈՒՄՆԵՐ. ԲԵՆԵՍԵԿՏԵՐ

Էմ. Օ. Պիվազյան

ԵՐԿՈՒ ԽՆԴԻՐ ՄԽ. ԳՈՇԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մխիթար Գոշի «Դատաստանագրքը» միջնադարյան հայ իրավունքի ամենակարևոր հուշարձանն է։ Բազմաթիվ ուսումնասիրություններ կան «Դատաստանագրքի» վերաբերյալ, շատ հարցեր հետազոտված ու լուծված են, շատ հարցեր էլ դեռևս կարոտ են հետազոտման։ Լուծված հարցերից է «Դատաստանագրքի» աղբյուրների և հեղինակի կողմից դրանց օգտագործման եղանակի հարցը։ Սակայն այս և մի քանի այլ հարակից խնդիրներ ի նորո՞՞ծ գտում է քննել և։ Թորոսյանը Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրում» տպագրված «Մխիթար Գոշի 'Դատաստանագրքի անշակցությունը Աստվածաշունչ գրոց հետո՝ վերնագրով հոգվածում», ուր արտահայտված են միանգամայն անընդունելի կարծիքներ, որոնց չի կարելի շանուրադառնալ։

Յուրաքանչյուր օրենսգիրք, քնականաբար, պետք է ունենա իր աղբյուրները, որոնցից կազմողը նյութ հավաքի, որոշի դատաստանի ենթակա հարցերը, քաղի զանազան նորմեր, դրանք բովանդակավորի ըստ իր իրավահայեցողության, «համանի իրավաբանական դրույթներ և այլն»։ Մխիթարը իր «Դատաստանագրքի» հիշատակարանի մեջ տրտնչում է «զաղբատուրենի մատենից», «յուրոց զնիթս հավաքել ի դեպ էր»։ Բնաստամյանցը Մխիթարի «Դատաստանագրքի» իր ուսումնասիրության և ծանոթագրությունների մեջ ցույց է տվել, որ օրենսգրքի հեղինակը ձևերի տակ ունեցել և օգտագործել է Աստվածաշունչը, Հայոց Կանոնագիրքը, նրա աղբյուրներից են եղել առգիր օրենքները սովորութական իրավունքը։ Հետագայում պարզված է նաև Մխիթարի մի այլ աղբյուրը։

Օրենսգիրք կազմողը այլ կերպ չէր կարող վարվել. նա իր նյութը պետք է քաղեր առկա աղբյուրներից։ Սակայն ավելի կարևորը այն է, թե ինչ մոտեցում է տնեցել Մխիթարը իր աղբյուրների նկատմամբ, ի՞նչ է վերցրել նրանցից և ինչը թողել, նույնությամբ է վերցրել, թե փոփոխել է, ի՞նչն է նույնությամբ վերցրել և ինչու, ի՞նչն է փոխել և ինչպե՞ս, ի՞նչ իրավահայեցողությամբ, ի՞նչ գաղափարախոսությամբ, հասարակական ի՞նչ պայմանների թելադրանքով, ինչպե՞ս և ի՞նչ չափով է նրա օրենսգիրքը ներկայացնում հասարակական դասային-դասակարգային և սովորական-մարդկային լիոնհարաբերությունները և այլն, և այլն։

Մեր նպատակից դուրս է այդ հարցերին պատասխանելը. դրանց լուսաբանումը պահանջում է մեկից ավելի հետազոտողների մանրակրկիտ ու տրնաչան աշխատանք։ Այդ հարցերին ուզում ենք անդրադառնալ միայն և։ Թորոսյանի «Տեղեկագրում» և «Հանդեսում» տպագրված հոդվածներում «Դատաստանագրքի» ստեղծման ընթացքի և աղբյուրները օգտագործելու եղանակի մասին արտահայտած նորահնար ու անհիմն կարծիքի կապակցությամբ։

Ահա ինչպես է ներկայացնում Թորոսյանը Դատաստանագրքի ստեղծումը. Մխիթարը վաղուց ի վեր մտադրվում է համազգային նշանակություն ունեցող մի դատաստանագիրք գրել. նա անցնում է գործի. դատաստանագիրքը պառուստ է։ Նա գիտեր, որ մասնավոր անձի կողմից կազմված օրենսգիրքը չի կարող համազգային գործադրություն ունենալ. ուստի փորձ է անում ազգային ժողով գումարել սանկցիա ստանալու համար։ Ազգային ժողովի գումարման փորձը ձախողվում է ինչ-ինչ պատճառներով։ Եվ ահա նա՝ դիմում է այլ միջոցի՝ դատաստանագրքի

1 ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտություններ), 1963, № 4, էջ 61—74։ Մեր այս հոդվածում նկատի ունենք նաև նույն հեղինակի «Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձևագրերն ու խմբագրությունները» («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 137—150) և «Երկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի» («Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 57—74) հոդվածները։

օրենսդրական ազդրությունից բխած լինելու ուժը լրացնելու համար. պատրաստի դատաստանագրքի հոգվածները լրացնում է Աստվածաշնչից և Կանոնագրքից ընդարձակ հատվածներով՝ նրանց «զորությամբ» լրացնելով օրենսդրական ուժի պակասությունը: Մխիթարը դիմել է Ս. Գրքին և Կանոնագրքին հարկադրված, իր ցանկությունը, մտադրություններին և աշխատության ընդունելի հակառակ:

Այս ամբողջ պատկերը հորինված է Մխիթարի Նախադրության հետևյալ հատվածից ելնելով.

«Բայց վայելուչ եղևալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղևալ սա. զոր և ես ախորժելով խնդրէի, բայց ոչ պատահեաց այս վասն բազում պատճառի. զի թէ դատաւորաց երկուց և երկից ի միասին լինել ի դատելն իրաւունս լինել համարեցար, որչափ ևս առաւել և այսմ պարտ էր ի միասին լինել բազմաց և քննել գիրս և ապա գրով դրոշմել: Բայց զի այս ոչ պատահեաց, վասն այնորիկ զայսոսիկ պակասութիւնն և գրով լնումը, գնոցա զօրութիւնն և զարամանն առնումը վկայած:

Թորոսյանը ենթադրում է, թէ Մխիթարը ուներ գրած-պատրաստի դատաստանագիրք և ուզում էր ժողով գումարել այն հաստատելու համար. «Մխիթարը ինչ կարող էր զնել ժողովի լինության, կամ ինչ պետք է քննել ժողովը, եթէ Դատաստանագիրքը պատրաստ չէր»⁴,—գրում է նա. «սանձաւոր կղաւնար նույնիսկ ժողովի գումարման հարցով զբաղվելը»⁵:

Մենք մեր մի հոգվածումս արդեն հավաստել ենք, որ 1184 թ., Նախադրությունը գրելիս, որի մէջ խոսում է ժողովի մասին, «Դատաստանագիրքը» պատրաստ չէր, գրված չէր. Գոշը «սկսել» էր գրել. նա իր գործի Նախադրության մէջ պատմում է սկսվող, ոչ ավարտված դատաստանագրքի մասին:

Մյուս կողմից՝ Թորոսյանը յուրովի և արդիական ձևով է պատկերացնում ժողովն ու ժողովում որևէ հարցի քննարկումը, ժողովների ընթացակարգը: Մխիթարը վերը բերված բազմածրում խոսում է ոչ թէ ժողովով պատրաստի դատաստանագիրքը քննելու և հաստատելու մասին, այլ դատաստանի խնդիրները ժողովով կամ շատերի հետ քննելու և գրելու մասին. «...որչափ ևս առաւել և այսմ պարտ էր ի միասին լինել բազմաց և քննել գիրս և ապա գրով դրոշմել»: Քննությունը պետք է լիներ գրով դրոշմելուց, գրելուց առաջ, Գոշի ասելով՝ մեկից ավելի մարդիկ միասին հավաքված պետք է քննեն ու գրեն օրենսգիրքը (հնում ժողովների ընթացակարգին համապատասխան), որը և միաժամանակ հաստատված կլիներ:

Այսպես եւս ստեղծվել նաև առանձին ժողովների կանոնական որոշումները. ժողովներում ոչ թէ մեկի կողմից նախօրոք գրավոր ձևով պատրաստած կանոնական հոգվածները հաստատել են, այլ միասին քննել են առանձին հարցերի վերաբերյալ բանավոր առաջարկվող կանոնները և հաստատել, փոփոխել կամ մերժել:

Քանի որ մարդիկ չեն եղել որոնց հետ նա խորհրդակցեր, ժողով չի եղել, ուստի նա իրեն խորհրդակցից է առնում Ս. Գրքի վկայությունները: Պարզ է, որ հենց սկզբից էլ, ինչպես հաղորդում է Գոշը, «Դատաստանագրքում» եղել են Աստվածաշնչից ու Կանոնագրքից եղած հատվածները: Մտացածին է ասել, թէ Մխիթարը հետո է տյոգ հատվածները ավելացրել, որպեսզի պատրանք ստեղծի, թէ ինքը միշտ հետևում է Ս. Գրքին, պատրանք, որը իբր Մխիթարին շատ լավ հաջողվել է... որովհետև ոչ միայն միջնադարում, այլև մեր օրերում, հավատացել են դրան նույնիսկ այնպիսի լրջամիտ հետազոտողներ, ինչպես Բաստամյանցը, Կարստը, Սամվելյանը և այլք»⁷:

Մեր կարծիքով, սակայն, Մխիթարը որևէ պատրանք ստեղծելու նպատակ չէր կարող ունենալ, չի ունեցել, և Բաստամյանցը, Կարստը, Սամվելյանը չեն խաբվել որևէ պատրանքից: Ընդհակառակը՝ Թորոսյանն է պատրանք ստեղծում պատրանքի մասին, պատրանք ստեղծում, թէ Մխիթարը չի հետևել Աստվածաշնչին: Այսպես է դատում նա. «Եթե Մխիթարը մեջ էր բերում մովսիսական օրենքը, ապա այն չպետք է փոխեր, ինչպես արել է մի քանի դեպքերում: Իսկ եթե փոխելու էր, այն էլ այնպես, որ սկզբունքորեն հակառակն ստացվեր, ապա անիմաստ էր դառնում Հնգամատյանը վկայակոչելը: Առանց դրան էլ նա կարող էր ուղղակի սահմանել իր նոր-

2 Տե՛ս «Տեղեկագիր», 1963, № 4, էջ 71. Նույնը նաև՝ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 148—149:

3 «Դատաստանագիրք», Նախադրություն, էջ 68:

4 Քանքեր Մատենադարանի», № 6, էջ 63:

5 «Տեղեկագիր», էջ 72:

6 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 193—221:

7 «Տեղեկագիր», էջ 70:

մը... Ուրեմն, Մխիթարին պետք է եղև պատրանք ստեղծել, որ նա միշտ հետևում է Ս. Գրքին»⁹։

XII դարի մտածողի նկատմամբ դիմախոսական այս դատողությունը արվում է առանց ժամանակի ու տեղի հաշվառման. նման պայագայում բննարկվող առարկայի մասին ամեն տեսակ «կարող էր» կարելի է ասել։

Անհրաժեշտ է նկատի առնել, մի կողմից, որ Ս. Գիրքը ի սկզբանե լույս ծաղրք գիրք» չի եղել, այն նաև բազմաթիվ հին ժողովուրդների դարավոր կենսափորձի վրա հենված գիտելիքների համագումար է։ Միջնադարում էլ այն որպես այդպիսին է դիտվել։ Գոշի համար ևս Աստվածաշունչը «սուրբ գիրք» լինելուց բացի, դիտելիքների աղբյուր է, իմաստուն մարդկանց բանքը։ Մյուս կողմից՝ «Դատաստանագիրքը» իր ժամանակի ծնունդ էր, ժամանակ, երբ մտքերի վրա իշխում էր կրոնական գաղափարախոսությունը, երբ հոգին իր տեղը ուներ, մարմինը իր տեղը, երբ դեռ առաջնությունը տրվում էր հոգուն։ Որքան էլ տարբեր ձևով խորհողներ ծնել այդ ժամանակը, որքան էլ առաջադիմական մտահայեցողություն ունենար Մխիթարը, այնուամենայնիվ իր ժամանակի համար օրենսգիրք գրողը չէր կարող հակադրվել առկա իշխող հարաբերություններին, չէր կարող ներհակ գիրք ունենալ ֆեոդալիզմին և «գրոց» իշխող գաղափարաբանությանը։ Այսօրինակ հանգամանքներում Մխիթարը չէր կարող մի կողմ թողնել Աստվածաշունչի պատգամները։ «Զի ամենայն պիտի վասն այնորիկ կարգեցան,— գրում է Գոշը,— պի գմարդիկ ի մեղաց կարճեսցեն, նոյնպէս և զիրս դատաստանի ջանայ հատանել զլարս և և զանիրաւս, զի սիրով և բարեմտութեամբ կայցիմք առ միմեանս»¹⁰։

Մի հիմնական հարցում՝ Ս. Գրքի և դատաստանաց գրի նպատակի հարցում, ուրեմն, Գոշը նույնություն է տեսնում։

Ուշագրություն արժանի է դատաստանաց գիր ստեղծելու Մխիթարի նշած պատճառներից 10-րդը. «...զի յորժամ ստեղծաւ մարդն՝ վիշաց աստուած ի նա զհոգւոյն շնորհ... իսկ իբրի դարձան ի մեղս, ասաց աստուած՝ մի՛ մնացէ հոգի իմ ի մարդկան վասն գոլոյ դոցա մարմինս։ Ուստի և Քրիստոս իբրեւ եկն՝ զնոյն հոգի ետ մարդկան և զհոգւոյն դատաստան, որ է աւետարանն և կանոնքն, զի գիտէր, թէ մարմնաւորք ի հարկէ զմարմնաւոր դատաստան դատին։ Բայց զի դարձան ի մարմին դարձար, հարկ է այսուհետեւ գրով ընդունել զդատաստանս ընտրելով ի գրոց»¹⁰։

Ըստ Մխիթարի, ուրեմն, դատաստանը պետք է ընդունել ընտրելով ի գրոց, մարմնական շնորհը պետք է հենվի «հոգւոյ» դատաստանի վրա, Ս. Գրքի վրա։ Նրա կարծիքով «յօրենս Քրիստոսի» կա դատաստան, բայց «զի այժմ պակասեաց ի մէջ գիտութիւնն, որով կարող լինէր փորձել և ընտրել զդատաստանն ըստ ժամանակի և ազգաց և աշխարհաց. կամեցաւ ի գրոց հաւարմամբ գրել զդատաստան, զի լիցի անշարժ ըստ նմանութեան օրինաց և մարգարէից և աւետարանին»¹¹։

Ինչի՞ վրա պետք է հենվել, որտեղից՝ պետք է բաղվելին այն դատաստանագրքի հոգւածները, որը նման էր լինելու «օրինաց և մարգարէից և աւետարանին»։

Մխիթարի կարծիքով դատաստանադիրք կազմողը պետք է լինի «գիտող Սուրբ Գրոց»։ Երբ նրա աշակերտ Պողոսը նրան հորդորում է օրենսգիրք կազմել, նա սկզբում հանձն չի առնում և մտածում է «աղսչել զայլ զարաւորս ի սուրբ վարդապետաց, զի և բազումք էին անուանիք գիտողք Սուրբ Գրոց»¹²։

Ավելին, դատաւորը ևս չսխալվելու համար պետք է լինի «գիտուն Սուրբ գրոց»¹³։ «Եւ պարտ է դատաւորաց ի գիշերի և ի տունչեան ընթիւնուլ ոչ միայն զսուրբ գիրս Կտակարանաց և զգիրս դատաստանաց, այլ և որսալ և ի միտ առնուլ զքանս իմաստուն մարգոց յամենայն աւղաց. և թեպէտ յատուկ դատաստանին բանքն չիցեն, բայց ոյժ առնուն յիմաստուն քանիցն և նմանեցուցանեն միշտ»¹⁴։

Միանգամայն պարզ է, որ Մխիթարը հենց սկզբից կամենում էր ստեղծել Ս. Գրքի և կանոնների վրա հենված օրենսգիրք, որպիսին է, իրոք, մեզ հասած «Դատաստանագիրքը»։ Սյն, ինչ նա ասում է դատավորների մասին, նույնը վերաբերում է և իրեն՝ Գոշին. նրա օրենսգրքի

⁹ Նույն տեղում, էջ 69—70։

¹⁰ «Դատաստանագիրք», Նախապրութիւն, Լ, 19։

¹¹ Նույն տեղում, էջ 13։

¹² Նույն տեղում, էջ 10։

¹³ Նույն տեղում, էջ 16։

¹⁴ Նույն տեղում, էջ 25։

¹⁵ Նույն տեղում, էջ 31։

մեջ էլ թի գիշերի և ի տունընան տեսնում ենք Ս. Գրիբը, նա որսացել է Վերանա իմաստուն մարդոց յամենայն ազգաց՝ ուժ է առել նրանցից:

Պարզ է միաժամանակ, որ Գրիբը չէր կարող հակադրվել Ս. Գրիբին, որպիսի հակադրություն չանում է տեսնել Թորոսյանը: Այնուամենայնիվ շեղումներ կան: Մխիթարը քաղելով օրենքները իր աղբյուրներից՝ երբեմն ընդունում է նույնությամբ, երբեմն յրացնում է, երբեմն վերափոխում է, երբեմն էլ մերժում և առաջարկում նոր վճիռ՝ ամեն անգամ տալով համապատասխան բացատրություն: Ինչպես ճիշտ նկատում է Սամվելյանը, հենց այստեղ՝ է հանդես գալիս Գրիբի իրավահայեցողությունը, որի մեջ արտացոլվում է «տեղում և իր ժամանակի հասարակության մեջ գործող սովորութեական իրավունքի ոգին, տիրող իրավարանական նորմերի ազդեցությունը»¹⁵:

Արդ՝ թույլատրելի՝ էին շեղումներն Ս. Գրիբի օրենքներից, Գրիբը կարող էր շեղվել նրանցից, վերափոխել զրանք, նոր վճիռներ առաջադրել. թե՛ իսկապես Գրիբը ստեղծել է դատաստանագրքի աղբյուր չունենալով Ս. Գրիբը, Կանոնագրի բնույթը և այլն, և հետո միայն իր օրենսգրքին զորություն տալու համար ավելացրել է հատվածներ Աստվածաշնչից ու Կանոնագրից. այս հատվածները հավելված-կցորդներ են, թե՛ հոդվածների օրգանական մասն են կազմում:

Ինչդիր պարզ պատկերացնելու համար վերցնենք մի երկու հոդված:

«Յաղագս դատաստանաց ձառնայից և աղախնեաց սպանելոց ի տերանց

Եթե որ հարկան էլ զծառայ իւր կամ զաղախին իւր զատուգանաւ և մեռցի ի ձեռանէ նորա, դատաստանաւ վրեժխնդրութիւն լիցի ի տերանց:

Տեսա՞նք ասէ և դատաստան ի գաւաղան և ի սուրն և յայլսն այսպիսիս, միանգամայն յապտամբութիւն նոցա և ի պատճառ լինելն: Եւ եթէ՛ այլազգի իցին և եթէ՛ քրիստոնեայք, ըստ այնմ գինք արեանն տուգանիցին»¹⁶:

Հոդվածի առաջին պարբերությունը բառացի քաղված է մովսիսական օրենքից (Ելից, ԽԼ, 20), շարունակությունը Գրիբին է: Ինչպես տեսնում ենք փոխառվածը և սեփական մեկնարանությունը Մխիթարը միահյուսել է. փորձեցել կարգավ միայն Գրիբի ավելացրածը՝ ոչինչ չի հասկացվի, որովհետև երկրորդ մասը առաջինի մտքի շարունակություն-մեկնարանությունն է: Աստվածաշնչի հատվածը հոդվածի օրգանական մասն է:

Այդպես են «Դատաստանագրքի» հոդվածների մեծագույն մասը: Շատ դեպքերում Մխիթարը քաղում է իր աղբյուրներից որևէ օրենք և ավելացնում միայն մի երկու բառ՝ իր վերաբերմունքը ցույց տալու համար տվյալ օրենքի նկատմամբ, ինչպես, օրինակ, հետևյալում.

«Յաղագս դատաստանաց զանդս կեռողաց

Եթէ արածիցէ որ զանդ կամ զայգի և թոյլ տացէ խաշին իւրում արածել զանդ այլոյ յիւրմ, անդոյ անտի տուգանեսցի ըստ արդեանն: Ապա թէ զամենայն իսկ զանգն արածիցէ, զընտիր կողմն անդոյ իւրոյ և զընտիր կողմն այգոյ իւրոյ տուգանեսցի:

Սա այս ըստ յիւրացն դաւանալ լիցի իրաւամբ և այս հաստատեսցի դատաստան ըստ մեզ»¹⁷: Բուն օրենքը քաղված է Աստվածաշնչից (Ելից, ԽԲ, 5). Գրիբը ավելացրել է միայն ընդգծվածը, որտեղ սոսկ իր վերաբերմունքն է արտահայտում օրենքի նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, օրենքը ոչ թե ստեղծել է Գրիբը և որպես հավելված ավելացրել Աստվածաշնչի հատվածը, այլ՝ ընդհակառակը¹⁸:

Ավելին՝ կան դեպքեր, երբ Գրիբը զնում է հոդվածներ քաղելով իր աղբյուրներից՝ առանց որևէ բառ ավելացնելու. «Յաղագս դատաստանաց վկայից Լպիսկոսոսաց» հոդվածը չունի Գրիբի կողմից ավելացրած ոչ մի բառ. «Եւ ի վկայութիւն զթերահաւատ որ մի ընդունել, այլ և ոչ զհաւատացեալ զմի, քանզի ի բերանոյ երկուց և երկու վկայից հաստատեսցի ամենայն բան»:

Ամբողջ հոդվածը սա է, լրիվ վերցված Կղեմի 69-րդ կանոնից. Կա՛ այստեղ Գրիբի ստեղծած հոդվածը, որին, ասենք Թորոսյանի բառերով՝ «արհեստական զորություն» տալու համար նա ավելացնելու հատված Աստվածաշնչից կամ Կանոնագրից: Թորոսյանի պնդմանը հետևելով, պետք

15 Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, I, Երևան, 1939, էջ 84:

16 «Դատաստանագրք», էջ 340:

17 Նույն տեղում, էջ 352:

18 Տե՛ս նաև «Դատաստանագրքի» I մասի 11, 16, 17 մասի 16, 18, 19 և այսօրինակ շատ ուրիշ հոդվածներ:

է ասանք, որ այս ամբողջ հոգվածները հավելվածներ են, չնդածին զգորություն տվող հատվածներ. այսինչ դրանք «Դատաստանագրքի» առանձին ու հատուկ, ամբողջական հոգվածներ են:

Միանգամայն պարզ է, որ Գոշի՝ Ս. Գրքից և Կանոնագրքից բաղած հատվածները հավելվածկցորդներ չեն, հետագա ավելացումներ չեն պատրանք ստեղծելու համար, թե ինքը օգտվում է Ս. Գրքից, ոչ թե իր ստեղծած հոգվածներին զգորություն տալու համար է դրել Մխիթարը Աստվածաշնչի ու Կանոնագրքի հատվածներ, այլ նա «ղորություն» է առնում Ս. Գրքից ու ս. հայրերի կանոններից. այդ հատվածները «Դատաստանագրքում» ձևական չեն, այլ էական:

Այսպես, ուրեմն, Մխիթարը դիմել է Ս. Գրքին ու Կանոնագրքին ոչ թե «հարկադրված», իր ցանկություններ, մտադրություններին ու աշխատության բնույթին հանառակ, ինչպես չպատկերացնելով պատմական իրականությունը և չըմբռնելով նախադրության մեջ Մխիթարի տված բացատրությունները՝ պնդում է Թորոսյանը, այլ իր ցանկություններ, մտադրություններին ու աշխատության բնույթին համապատասխան:

Մխիթար Գոշի, իբրև օրենսդրի և մտափողի, դեմը բնորոշողը, սակայն, ոչ թե աղքատներին իր բաղած նյութերն են, այլ այն վերաբերմունքը, որ նա ունի այդ նյութերի նկատմամբ, այն մեկնաբանությունները, որ նա տալիս է դրանց, այն փոփոխությունները, որ նա կատարում է իր աղքատներին բաղած նյութերի մեջ:

Միջնադարում թույլատրելի՝ էր Ս. Գրքի օրենքների վերափոխումներ, խոտորումներ նրանցից: Այդ հարցին պատասխանում է ինքը Մխիթարը նախադրության մեջ. Քրիստոսը ինքն է թույլ տվել այդ օրենքները փոփոխել. «...Օրենք և մարգարէք և աւետարանն անփոփոխ է, բայց դատաստանն ի հարկէ փոփոխի յազգաց և յաշխարհաց. վասն այնորիկ թոյլ ետ (Քրիստոսը—էմ. Պ.) զի իմաստունք փորձիւ ըստ պատահմանն արասցեն դատաստանն»¹⁹: Քրիստոսը ինքն էլ փոփոխել է «առաջնոց ասացանքն», մովսիսական օրենքները, ըստ պատահմանն ասելով՝ «լուարուք զի ասացաւ առաջնոցն այս ինչ, բայց ես ասեմ ձեզ զայս ինչ»²⁰:

Գոշի կարծիքով տարբեր երկրների, տարրի բաժանակների յուրահատուկ պայմանները պահանջում են իրավական հարաբերությունների համապատասխան կարգավորումներ: Այստեղից էլ այն փոփոխությունները, որ Մխիթարը կատարում է մովսիսական օրենքներից և ս. հայրերի կանոններից օգտվելիս:

Գոշը իր «Դատաստանագրքի» բազմաթիվ հոգվածներում հանդես է գալիս իրեն մեկնաբանող ուրույն և հետևողական իրավահայեցողությամբ: Այս մեկնաբանություններով նա մովսիսական օրենքները հարմարեցնում է իր ժամանակի սոցիալ-տնտեսական հիմքին և հասարակական-քաղաքական պայմաններին: Այդ մեկնաբանությունները արտացոլում են հասարակական կյանքում կատարված իրավական փոփոխությունները, որոնց օրենսդրական հիմնավորումն էր «Դատաստանագրքը»: Նրա մեկնաբանությունների (ինտերպրետացիաների) մեջ է արտահայտվում հեղինակի՝ որպես մտածողի մեծությունը:

Ե. Թորոսյանն իր հոգվածներում անդրադարձել է նաև «Դատաստանագրքի» խմբագրությունների հարցին: Որոշորելով բանասեր՝ Վ. Հացունու կարծիքը, նա պնդում է, որ իբր թե «Դատաստանագրքը» ունեցել է 4 խմբագրություն, որոնցից առաջինը հենց այն տարրերակն է, որի մեջ չեն եղել Աստվածաշնչից հատվածները²¹: Մեզ հասած երեք (Թորոսյանի նշանակմամբ՝ Ա, Բ, Գ) խմբագրություններից երկուսը (Ա և Գ) ասեն հոգվածների այլ դասավորություն. այստեղ չկա «Դատաստանագրքի» բաժանումը եկեղեցական և աշխարհիկ մասերի: Գ խմբագրությունը, ըստ Թորոսյանի, նաև համառոտված է և գրված ... «միջին հայերենով»²²:

«Նոր» է ինչո՞ւ է կազմվել Դատաստանագրքի այս նոր (իմա Գ—էմ. Պ.) խմբագրությունը. որանք հետաքրքիր հարցեր են, որ քննում է Թորոսյանը: Նա գտնում է, որ Սմբատ սպարապետի ձեռքի տակ եղել է Մխիթարի «Դատաստանագրքի» Գ խմբագրությունը, ուստի և այն կազմվել է 1265 թ. (= Սմբատի Դատաստանագրքի ստեղծումն թվականը) առաջ, և քանի որ, շարունակում է Թորոսյանը, «բավական ժամանակ էր պետք, որպեսզի Դատաստանագրքի Գ խմբագրությունը Հյուսիսային Հայաստանից հասնի Կիլիկիա», ուստի «Մխիթար Գոշի Դատաստանագրքի Գ խմբ-

¹⁹ «Դատաստանագրքի», Նախադրություն, էջ 9:

²⁰ Նույն տեղում, էջ 6:

²¹ Տե՛ս «Տեղեկագիր», էջ 74:

²² Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 138—139: «Դատաստանագրքի» խմբագրությունների առանձնահատկությունների մասին Թորոսյանի բոլոր պնդումներն էլ ճիշտ չեն: Այդ մասին տե՛ս մեր հոգվածը «Պատմա-բանասիրական հանդեսում» (1964, № 2):

րագրությունը կազմվել է XIII դ. սկզբներին, հավանաբար այն ժամանակ, երբ դեռ հեղինակը կենդանի էր²³, — եզրակացնում է Թորոսյանը:

Սխալ է և՛ մի պնդումը, և՛ մյուսը. Սմբատի ձեռքի տակ չի եղել Գ խմբագրությունը, նա այդ չէ, որ թարգմանել-փոխադրել-խմբագրել է, և Գ խմբագրությունը Գոշի կենդանության ժամանակ չէր կարող կազմվել:

Իբրև ապացույց իր առաջին պնդման, Թորոսյանը նշում է Գ խմբագրության և Սմբատի Դատաստանագրքի համապատասխան հոդվածների հերթականությունը. նա կազմում է աղյուսակ (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 142) և առանց որևէ մեկնաբանության, ուղղակի և այն էլ ընդգծումով, գրում է, թե «Մեր կազմած աղյուսակից բխում է հետևյալ հետևությունը, որ Սմբատն օգտվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի ոչ բն տպագիր տեքստով ներկայացված խմբի որևէ ձևագրից, այլ մի այնպիսի նկարագրից, որ պատկանում է Ա կամ Գ խմբին»²⁴: Թե ինչու, ինչպե՛ս — մնում է անհայտ:

Սակայն նկատենք մի հանգամանք. Թորոսյանը վերցրել է առաջին 40 հոդվածների հերթականությունը իբր Եշատ տեղ չբաղեցնելու համար», այնինչ ԼՍԼ քերականության, 60—70 և կամ այլ հոդվածների համապատասխանությունները, ընթերցողը անմիջապես կնկատեր, որ Ա կամ Գ խմբագրության և Սմբատի Դատաստանագրքի միջև հոդվածների հերթականության որևէ օրինաչափություն չկա: Ընդհակառակը, Սմբատի և Մխիթարի «Դատաստանագրքի» որևէ տարբերակի հոդվածների հերթականությունները չունեն ոչ մի համապատասխանություն: Նշանակում է՝ այդ հիման վրա չի կարելի ասել, թե ինչ տարբերակ է եղել Սմբատի ձեռքի տակ:

Առհասարակ անօգուտ բան է հոդվածների հաջորդական հերթականության միջոցով փորձ անել տրոշելու, թե Սմբատը Մխիթարի «Դատաստանագրքի» որ տարբերակն է օգտագործել, քանի որ երկու դատաստանագրքերն էլ մեզ են հասել հոդվածների վերադասավորումներով: Այդ մասին ցուցում ունենք Սմբատի «Դատաստանագրքի» Առաջաբանության մեջ, որտեղ պահանջված են իր՝ Սմբատի և գրչի հիշատակարանները: Սմբատի հիշատակարանին անմիջապես հաջորդում է գրչի հիշատակարանը. «Առ որս աղա՛նձ զամենանան վասն սիրոյն Քրիստոսի որ մեղաց թողութիւն խնդրեցէր պարոնիս մերոյ Սմբատայ, զի սա ետ մեզ փոխել ի յիւր լուսաւորեալ գրոցն: Եւ արդ գրեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ և գոյանալոյ երկրի: Եւ ապա վասն աշխարհական դատաստանաց և դատաւորաց և համառօտարար զսիրտ բանիցն: ... Յառաջ պատեմ համարեցաք զփիճակեալ դատաւորացն գրել, բուն յառաջ զթագաւորացն, վասն զի յաստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն և յաստուծոյ տեղին է համարած: Եւ զնոցիւն դատաստանն և զիրաւունքն զրեցաք և ապա զկարգաւորաց և զաշխարհականաց, զայր և զկնոջ»²⁵:

Դեռևս Վ. Բաստամյանցը սույն հիշատակարանի հիման վրա նկատել է, որ «անհայտ գրիչը և բն է նաև ինչ-ինչ փոփոխություններ Դատաստանագրքի հոդվածների դասավորության մեջ, բան թե ունեցել է Սմբատի ձեռագիրը...»²⁶:

Երկու դատաստանագրքերի հոդվածների դասավորությունից միայն մի հետևության կարելի է հանգել. այն դեպքերում, երբ Գոշի մոտ, անկախ «Դատաստանագրքի» տարբերակներից, հոդվածները հարմար դասավորություն ունեն, խառնակ չեն և միմյանց հաջորդում են բովանդակությամբ նման հոդվածներ՝ այդ դեպքում Սմբատի մոտ պահվել է Գոշի Դատաստանագրքի հոդվածների առանձին խմբերի կարգը²⁷:

Ապացուցելու համար, որ Սմբատը օգտագործել է Գ խմբագրությունը, Թորոսյանը դիմում է նաև համապատասխանող հոդվածների տեքստային համեմատության. սրանք ևս անարժեք ու ոչինչ չապացուցող բաներ են: Դրանցից մեկը «Յաղագս դատաստանաց առն և կնոջ, որք անկա՛ր

²³ Նույն տեղում, էջ 148:

²⁴ Նույն տեղում, էջ 142 (ընդգծ. հեղինակինն է):

²⁵ Զեռ. Մատենադարանի, № 487, էջ 6ա—6բ: Սմբատի «Դատաստանագրքի» մեզ հասած լրկու ձևագրերում հիշատակարանը տարբեր տեղերում է. Կարստը քննելով երկու տարբերակները, վերականգնում է սկզբնականը. երկուսի միացումով, դուրս թողնելով պարոնիս մերոյ Սմբատայ, զի սա ետ մեզ փոխել ի յիւր լուսաւորեալ գրոցն: Բառերը, շարունակությունը ևս վերագրելով Սմբատին: Փոփոխություններ կատարողը այս պարագայում Սմբատը խնդրէ զառնում: Ներկա դեպքում կարևոր չէ, թե որքան է ճիշտ Կարստը. մեզ հետաքրքրողն այն է, որ հոդվածների դասավորության մեջ փոփոխություններ կատարվել են:

²⁶ «Դատաստանագիր», Հատուցարանություն հրատարակողի, էջ 55:

²⁷ Ավելի մանրամասն այս մասին տես է.մ. Պիվադյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի առնչակցությունը, «Բանբեր Մատենադարանի», № 5, էջ 121—122:

զոն լուծանել զերուսթիւն» հողվածի մի հատվածն է, Թորոսյանը համեմատում է Ա (նույնն է նաև Բ-ն), Գ խմբագրությունների երկրորդ հողվածի և Սմբատի առաջին հողվածի համապատասխան հատվածները²⁸, Նրան թվում է, թե Ա (նաև՝ Բ) և Գ խմբագրությունների միջև տարբերություն կա, և Սմբատը օգտվել է Գ խմբագրությունից: Ո՞րն է այդ տարբերությունը. «Ըստ Ա խմբագրության,— գրում է նա,— թագավորը սլարդապիս իրավունք տւնի (սիշխանութիւն կալցիս— էմ. Պ.) բաղաբ կառուցելու, դրամ հատելու և այլն: Ըստ Գ խմբագրության՝ թագավորն այդ անում է ինքնիշխան, միահեծան կամրով (սիքնիշխան կամար արասցէա—էմ. Պ.) վերջին ձևով է արտահայտում և Սմբատը (միայն թագավորն է, որ կարող է...)»²⁹:

Թորոսյանը ճիշտ չի հասկացել իր ընդգծած սիքնիշխան կամար արասցէա դրաբարյան արտահայտությունը. «ինքնիշխան կամար» շշուկովում է ազատ կամով և ոչ թե «միահեծան կամով»:

Ուրեմն՝ բերված համեմատությունները ոչինչ չեն ապացուցում: Կան սակայն փաստեր, որոնք ապացուցում են, որ Սմբատը օգտագործել է, նրա ձեռքի տակ եղել է Գոշի «Դատաստանագրքի» մասերի բաժանում ունեցող տարբերակը, Գոշի գրած տարբերակը: Այդ փաստերից բերենք միայն մեկը.

Սմբատի «Դատաստանագրքի» 161-րդ հողվածը (ըստ 1958 թ. հրատ.) համապատասխան է Մխիթարի «Դատաստանագրքի» Բ տարբերակի 11 մասի 9-րդ և Ա, Գ տարբերակների 27-րդ հողվածներին: Համեմատենք դրանց առաջին հատվածները.

Բ խմբագրություն	Գ խմբագրություն	Սմբատ
Ի գինարբուս վնաս ինչ եղևալ ըստ հոգևոր մեր օրինաց մի լիցի յաղագս այնորիկ ինչ ներել, զի նուի արբեցութիւնն դատի. և թէ անդ զմիմեանս ի մարտնչելն բեկանիցեն և կամ խեղիցեն, հաւաստի գատ լիցի և բժշկու. Թեան և խափանածոյն տուղանեսցի...» ³⁰ :	«Ի մէջ զինէխում մարդկան եթէ ընդ միմեանս կռուին, կոտորի ձեռն կամ այլ ասղաս, պարտի բժշկել և զխափանումն կանգնել» ³¹ :	«Կու հրամայէ արէնքս, որ զայն ցեղն երկու ազգ պիտի դատել՝ մէկ վասն արբեցողութեան, որ ինքն մարդ էր և հանչանք խմեց՝ որ խումբեցաւ տայ ու զայն վնասն արար. և երկու հետ վասն վնասուն զոր գործեց, և զինչ վնասն արժենայ» ³² :

Ըստ Բ տարբերակի և Սմբատի՝ կովող հարեցողները կրկնակի պատժի պետք է ենթարկվեն՝ հարբելու համար (հմմտ. ընդգծված մասերը) և կովելու ու վնասելու համար, իսկ Գ խմբագրության մեջ բացակայում է հարեցողության, հարբելու համար պատժը: Այս վերջինիս առկայությունը Բ խմբագրության մեջ և Սմբատի մոտ և բացակայությունը Գ-ում միանգամայն պարզ ցույց է տալիս, որ Սմբատի ձեռքի տակ եղել է Բ խմբագրությունը, նա փոխադրել է այդ տարբերակի և ոչ թե Գ խմբագրության բնագիրը:

Ուրիշ շատ «նորություններ» էլ կան Թորոսյանի հողվածներում: Դրանցից մեկն այն է, թե խոր Սմբատը վկայում է, որ «օգտվել է Մխիթարի Դատաստանագրքի Գ խմբագրությունից»: Նա այդպիսի հետևություն հորինում է Սմբատի հիշատակարանի մի հատվածի հիման վրա: Սմբատը գրում է. «... Ես՝ Սմբատս... բազում աշխատանաւ աշխատեցա ի դատաստանագիրքս ծերացեալ մտաւ և ձեռաւ ի հին և ի դժարաբառ և յանհասկանալի գրոց, վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս, հանց որ իսկի չիին հասկանալ և ոչ յօկտել գայր»:

Այս հիշատակարանի ապակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս արտահայտության մասին Ղ. Հովնանյանը գրում է. «Ո՞չ մէկը կարող եղանք հասկնալ և ոչ այլը: Սմբատի «Դատաստանագրքի» մեզ հասած երկու ձեռագրերում հիշատակարանների մեջ զգալի տարբերություններ կան. բերված հատվածը մեր Մատենադարանի ձեռագրից է (№ 487, էջ 6ա), Վենետիկի՝ 1331 թ. գրված ձեռագրում այդ տեղը այսպես է. «... Ես Սմբատս... բազում աշխատեցայիսա ծերացեալ մտօք ի հին և յանհասկանալի բառից»:

²⁸ Տե՛ս «Պատմա-քանասիրական հանդես», 1963, № 1, էջ 143:

²⁹ Նույն տեղում, էջ 143—144:

³⁰ «Դատաստանագիրք», էջ 324:

³¹ Մատենադարանի ձեռ., № 2593, էջ 55ա:

³² Смбат Спарамет, Судебник, էջ 141:

Այս հատվածի անհասկանալի լինելը և երկու բնագրերի զգալի տարբերությունները մեզ այն համոզման են բերել, որ հիշատակարանի այս տեղը խանգարված է³³, Թորոսյանը, սակայն, համաձայն չէ. նրա կարծիքով «խանգարում-խաթարում» չկա, և այն, ինչ լեզվական տեսակետից չեն հասկացել նշանավոր լեզվաբան-բանասեր Ղ. Հովնանյանը, գրաբարի, մանավանդ միջին հայերենի լավագույն մասնագետ-հետազոտողներից մեկը, «և այլք» — մյուս Մխիթարյանները և ժամանակի մասնագետները, միանգամայն պարզ ու հասկանալի է Թորոսյանի համար, նա բերված հատվածի սրբագրման աշխատանքը աշխատանքային դատաստանագիրք... Ի հիշում և ի դժուարությամբ և յանհասկանալի գրոց» արտահայտությունը այսպես է բացատրում. «սմբատն ասում է... շատ աշխատեցի Դատաստանագրքի դժվարարան, անհասկանալի ու հին գրի, որ միևնույնն է թե՛ մատյանի, ձեռագրի վրա»³⁴, Թորոսյանը թեև հիշատակարանի երկու բնագրերին էլ ծանոթ է, բայց նրա համար նշանակություն չունի, որ մեկում գրված է «ի հին և յանճախանալի բանից», որտեղ խոսքը բառի, լեզվի մասին է, և ոչ գրի, գրքի, մատյանի, ձեռագրի:

Վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառին ի նորոյս՝ հանց որ իսկի չլին հասկանալի և ոչ յօկտել գայր» բառակապակցությունն էլ հեշտությամբ է բացատրում. «այլակերպված էր ու հեռացած հին հայ լեզվից (տեղեկ գրաբարից) և (մեր) այս նոր լեզվից (կիրիկյան բարբառից), այնպես, որ ոչ հասկանալի կարող էին և ոչ էլ օգտվել կամ օգտագործել»: Անհասկանալի է մնում, թե ի՞նչպես՝ հեռացած էր «ի հին հայ բառին ի նորոյս» կարող է նշանակել՝ հեռացած էր գրաբարից և կիրիկյան բարբառից: Եթե Սմբատի ձեռքի տակ եղած՝ Գոյի «Դատաստանագիրքը» ոչ գրաբարով էր գրված, ոչ էլ միջին հայերենով, հապա ի՞նչ լեզվով էր:

Այսպես ուրեմն, հենց սկզբից էլ «Դատաստանագրքում» եղել են Աստվածաշնչից ու Կանոնագրքից բաղված հատվածներ. դրանք «Դատաստանագրքի» անբաժանելի մասն են կազմում: Այս մասին Թորոսյանի եզրահանգումը, որ նպատակ ունի «բարձրացնել» Մխիթար Գոյին, մտացածին և հակապատմական է: Օրիշտ չեն նաև այդ եզրահանգմանը հիմք ծառայող բանասիրական դիտողությունները «Դատաստանագրքի» խմբագրությունների վերաբերյալ:

Մխիթարը հենց սկզբից ստեղծել է Ս. Գրքի ու կանոնների վրա հենված օրենսգիրք, որպիսին է, իրոք, մեզ հասած «Դատաստանագիրքը»: Այստեղ հեղինակը չի հակադրվել և չէր կարող հակադրվել Ս. Գրքին: Նա քաղում է օրենքներ Աստվածաշնչից ու այլ աղբյուրներից՝ երբեմն բնութագրելով նույնությամբ, երբեմն լրացնելով, հաճախ վերափոխելով, երբեմն էլ մերժելով ու առաջարկելով նոր վճիռ՝ միշտ տալով համապատասխան բացատրություն: Մխիթարին, որպես օրենսդիր ու մտածողի, բնորոշում են այդ իսկ բացատրությունները, այն վերաբերմունքը, որ նա ունի իր աղբյուրների նկատմամբ, այն մեկնաբանությունները (ինտերպրետացիաները), որ նա տալիս է դրանց մի հետևողական իրավահայեցողությամբ: Բոլոր դեպքերում նա հանդես է գալիս որպես մեծ մտածող և հումանիստ: «Դատաստանագրքի» հեղինակին բնորոշ է համազգային շահերի ըմբռնումն ու դրսևորումը, սոցիալ-քաղաքական նրա ելակետը համազգային շահերն են:

Эм. А. Пивазян

ДВА ВОПРОСА В СВЯЗИ С «СУДЕБНИКОМ» МХ. ГОША

Р е з ю м е

В статье критикуется высказанное недавно сотрудником Матенадарана Х. Торосьяном мнение, согласно которому в «Судебнике» Мх. Гоша первоначально якобы не фиксировали отрывки из Библии и Книги канонов, что Гоша эти отрывки включил позднее, чтобы создать иллюзию того, что он всегда следует Библии. Считая мнение Торосьяна ошибочным и антиисторичным, автор показывает, что указанные отрывки имелись в «Судебнике» с самого начала и составляли его неотъемлемую часть.

Рассматриваются также некоторые филологические вопросы, связанные с «Судебником» Гоша.

³³ Տե՛ս Է. Ա. Պիվազյան, Մխիթար Գոյի և Սմբատ սպարապետի դատաստանագրքերի առնչակցությունը, «Բանբեր Մատենադարանի», № 5, էջ 127:

³⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 1, էջ 147—148: